

ԾՐԱԳԻՐ

2014 թ. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ՝ ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Պատասխանատու մարմինը (կազմակերպությունը)	Ֆինանսավորումը (չափը, աղբյուրը)	Ծանոթություն
1.	ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	մայիսի 9	ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	3 մլն. դրամ, ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	<p>Տոնակատարությունը կազմակերպվելու է մարզի համայնքներում (ցուցահանդեսներ, համերգներ համայնքային արվեստի և գեղարվեստի դպրոցներում, մշակույթի տներում), ուսումնական հաստատություններում (շարադրությունների մրցույթ, երգի մրցույթ-փառատոն մարզի հանրակրթական դպրոցների 6-18 տարեկան աշակերտների միջև՝ երեք փուլով և տոնական գալա-համերգով, բաց դասեր, ցերեկույթներ, ցուցահանդեսների, պատի թերթերի, պաստառների ձևավորումներ, սպորտային միջոցառումներ), իսկ գլխավոր միջոցառումը՝ Արմավիրի մարզկենտրոնի հրապարակում:</p> <p>Կազմակերպվելու է շքերթ, ծաղիկներ և ծաղկեպսակներ կդրվեն զոհվածների հուշարձաններին:</p> <p>Տոնակատարությունը կշարունակվի համերգային ծրագրով՝ պարային, ժողգործիքների, սիմֆոնիկ, էստրադային խմբերի, հանրապետության և մարզի ճանաչված կատարողների մասնակցությամբ:</p> <p>Միջոցառման վերջում տրվում է ճաշկերույթ Հայրենական Մեծ պատերազմի վետերանների և Արցախյան հերոսամարտի մասնակիցների համար:</p> <p>Նպատակն է կարևորել Հայրենական Մեծ պատերազմի և Շուշիի հաղթանակների անգնահատելի նշանակությունը հայոց պետականության պահպանման, երիտասարդությանը հայրենասիրական ոգով և պետականության գաղափարներով դաստիարակելու գործում:</p>
2.	ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ	մայիսի 28	ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	3մլն. 500 հազ. դրամ, ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	<p>Արմավիրի մարզում առանձնահատուկ շուքով է նշվում «Առաջին հանրապետության» և «Սարդարապատի հերոսամարտի» միացյալ տոնը՝ մայիսի 28-ը, որը կազմակերպվում է Սարդարապատի հուշահամալիրի ողջ տարածքում: Մասնակցում են ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, հազվորականներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների ներկայացուցիչներ, հյուրեր, մարզի բոլոր</p>

	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ				<p>համայնքները, հանրակրթական, արվեստի, գեղարվեստի, երաժշտական դպրոցները, մարզական, հասարակական և այլ կազմակերպությունները, մարզում տեղակայված զորմասերը:</p> <p>Կազմակերպվում են զինվորական շքերթ, պսակադրություն զանգակատան պատվանդանին և արցախյան հերոսամարտում զոհված հերոսների շիրիմներին:</p> <p>Հուշահամալիրի տարածքում ավանդական հյուրընկալ սեղաններ են բացում մարզի համայնքները, կազմակերպվում են ազգագրական պատկերներ, ազգային ծեսերի և սովորույթների բեմադրություններ, ցուցահանդեսներ:</p> <p>Այնուհետև տոնախմբությունը շարունակվում է համերգային ծրագրով՝ պարային, ժողգործիքների, սիմֆոնիկ, էստրադային խմբերի, հանրապետության և մարզի ճանաչված կատարողների մասնակցությամբ:</p> <p>Միջոցառման վերջում տրվում է պաշտոնական ճաշկերույթ:</p> <p>Ընդհանուր առմամբ տոնախմբությանը մասնակցում է 10-20 հազար մարդ:</p> <p>Նպատակն է նշել Հայաստանի առաջին հանրապետության և Սարդարապատի հերոսամարտի հաղթանակի նշանակությունը, հայոց պետականության ստեղծման և պահպանման կարևորությունը, հարգել հերոսամարտում զոհվածների հիշատակը:</p>
--	------------	--	--	--	--